# Դատական Գործ N: ՎԴ/4051/05/09

| | |
|---|---|
| Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է: | 03-09-2009 |
| **Հայցվոր/դիմող** | |
| Անուն: | Ա/Ձ Վանո Դավթյան |
| Հասցե: | Նոր-Արեշ 4 փ.12 ա տ |
| **Պատասխանող** | |
| Անուն: | ՀՀ մտավոր սեփականության ապրանքային նշանների և արդյունաբերության նմուշների բաժին |
| Հասցե: | Երևան գլխավոր պող |
| Քաղաքացիական գործի ստացման կարգը: | Առաջին անգամ |
| Ինքնուրույն պահանջ ներկայացնող: | |
| **3-րդ անձ** | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Պահանջ: | 2009 թ.հուլիսի 3-ի ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումն վերացնելու և պատասխանողին ապրանքային նշանը գրանցելուն պարտավորեցնելու պ/մ |
| Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը: | 1.1 |
| Պետական տուրք: | 0 |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ պահանջ: | |
| Պետական տուրք: | |

| | |
|---|---|
| Ամսաթիվ: | 07-09-2009 |
| **Նախագահող դատավոր** | |
| Դատարանի անվանում: | Վարչական |
| Դատավորի անուն: | Ռուզաննա  Հակոբյան |
| **Դատավոր** | |
| Դատարանի անվանում: | Վարչական |
| Դատավորի անուն: | |

| | |
|---|---|
| Ամսաթիվ: | 09-09-2009 |
| **Որոշման հիմքը** | |
| Հոդված | ՀՀ ՎԴՕ 73;78; ՀՀ ՔԴՕ 144 |

| | |
|---|---|
| Հայցվորին ուղարկված որոշման համարը: | Մատյան N: ՎԴ/4051/05/09 |
| Ամսաթիվ: | 09-09-2009 |

| | |
|---|---|
| Ներկայացման ամսաթիվ: | 30-09-2009 |

| | |
|---|---|
| Որոշման ամսաթիվ: | 01-10-2009 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 23-11-2009 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 28-10-2009 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 10:30 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 16-12-2009 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 23-11-2009 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 15:00 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 27-01-2010 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 16-12-2009 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 10:30 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 15-02-2010 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 27-01-2010 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 15:00 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 09-03-2010 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 15-02-2010 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 10:30 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 05-04-2010 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 09-03-2010 |

| | |
|---|---|
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ |
| Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Դատաքննության ամսաթիվ: | 27-04-2010 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 06-04-2010 |
| Այլ նշումներ: | 29-04-2010թ.՝ ժամը 10:55-ին վճռի հրապարակում |
| Ժամ: | 10:30 |
| Նիստերի դահլիճի համար: | 325 |

| | |
|---|---|
| Ամսաթիվ: | 29-04-2010 |
| **Հոդված** | |
| Հոդված | ՀՀ ՎԴՕ 59; 90; 100; 112-115; ՀՀ ՔԴՕ 130-132; ՀՀ ԴՕ 35.2 |
| Կարճման հիմքը: | Հայցվորը հրաժարվել է հայցից |

Դատական ակտ:

Վարչական գործ թիվ ՎԴ/4051/05/09

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
29 ապրիլի 2010թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Ռ.Հակոբյանի

քարտուղարությամբ՝ Ձ.Մակարյանի
մասնակցությամբ՝
պատասխանող՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալություն
/ներկայացուցիչ Արա Աբգարյան/

2010թ. ապրիլի 27-ին դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանի ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՎԱՆ» ՍՊԸ՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 03.07.2009թ. որոշումը վերացնելու և ապրանքային նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվոր անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանը խնդրել է վերացնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 03.07.2009թ. որոշումը և պարտավորեցնել գրանցել ապրանքային նշանը:
27.04.2010թ. նշանակված դատական նիստին հայցվորը և երրորդ անձի ներկայացուցիչը չեն ներկայացել, թեև պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին, ինչը հաստատվում է հանձնման մասին հետադարձ ծանուցագրերով:
Նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար, ՀՀ վարչական դատարանը որոշեց գործը քննել հայցվորի և երրորդ անձի ներկայացուցչի բացակայությամբ:
2010թ. ապրիլի 21-ին ՀՀ վարչական դատարան ներկայացված դիմումով հայցվորը հրաժարվել է հայցից:
Դատարանը եզրակացրեց, որ այն սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

| | |
|---|---|
| | ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ մինչև դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին, այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը, բացառությամբ նույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի:<br>Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:<br>Նկատի ունենալով, որ հայցվորը հրաժարվել է հայցից մինչև դատաքննության ավարտը, դատարանը եզրակացրեց, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:<br>Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ, 100-րդ, 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով դատարանը<br>Վ Ճ Ռ Ե Ց<br>անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանի հայցով ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերության նմուշների բաժնի, երրորդ անձ «ՎԱՆ» ՍՊԸ՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 03.07.2009թ. որոշումը վերացնելու և ապրանքային նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին, սույն վարչական գործի վարույթը կարճել:<br>Պետական տուրքի հարցը համարել լուծված:<br>Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան:<br><br>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ |
| Դատական ակտի ամսաթիվը: | 29-04-2010 |
| Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.: | 0 |
| | |
| Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ: | 27-05-2010 |
| էջերի քանակը: | 113 |
| Գործին կից նյութեր: | |
| Այլ նշումներ: | |
| | |
| Ամսաթիվ: | 27-05-2010 |
| էջերի քանակը: | 113 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 19 Մայիս 2011